ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 08.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/58

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.10.2017թ. թիվ 03/26-3/18640-17 գրությամբ Ա/Ձ Հայկ Գալստյանին (ՀՎՀՀ 40528506) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 06.10.2017թ. թիվ ԴՎԱ/3512 գրության հիման վրա, 13.10.2017թ. թիվ 03/26-3/18640-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է Ա/Ձ Հայկ Գալստյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 13.10.2017թ. թիվ 03/26-3/18640-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/12» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 4-րդ չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել Հայկ Գալստյան ԱՁ-ն և վերջինիս ծանուցվել է ներկայացնելու ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Սահմանված ժամկետում մասնակցի կողմից վերը նշված փաստաթղթերը ներկայացվել են, սակայն ներկայացված տեխնիկական բնութագրերում առկա են եղել անհամապատասխանություններ (տեխնիկական բնութագրում թողնվել են «կամ համարժեք» բառերը):

Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում Հայկ Գալստյան ԱՁ-ի կողմից ներկայացվել է տեխնիկական բնութագրի շտկված տարբերակ, որում սակայն նշված չէր ապրանքի կոնկրետ տեսակը (մակնիշը (ՊՄԲ)):

Գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշեց մերժել Հայկ Գալստյան ԱՁ-ի հայտը»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչներ Ապարտակ Մարկոսյանը և Կորյուն Ավետիսյանը:

3. **<u>Ա/Ձ Հայկ Գալստյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>**

Ա/Ձ Հայկ Գալստյանը Խորհրդին ուղղված 19.10.2017թ. թիվ 19.10/2017-1 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Մասնակցել եմ ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/12» ծածկագրով գնման ընթացակարգին և 4-րդ չափաբաժնով ճանաչվել եմ հաղթող

մասնակից, որից հետո ներկայացրել եմ այդ չափաբաժնով տվյալ ապրանքի (կլինգրիտ տակդիրային 1.5մմ) տեխնիկական բնութագիրը, որի մեջ նշել եմ ապրանքի անվանումը և մնացած ցուցանիշները:

Անվանման հետ միասին թողել եմ «համարժեք» բառը, այնուհետև ստացել եմ ծանուցում հանձնաժողովից, որով պահանջվել է տեխնիկական բնութագրում ապրանքը նշել առանց «համարժեք» բառի: Ուղղումը կատարելու ժամանակ սխալմամբ, թյուրիմացաբար հեռացվել է նաև «ՊՄԲ» բառը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ չափաբաժնով նախատեսված է միայն այդ ապրանքը, իսկ մնացած տեխնիկական ցուցանիշները մնացել են նույնը, չի փոխվել ոչ մի ցուցանիշ՝ անվանում, չափս, ապրանքային նշան, արտադրող երկիր և արտադրող, ուստի խնդրում եմ Ձեզ հաշվի առնելով վերը նշվածը, որ այն մտածված չի կատարվել, և դրանով հանդերձ բուն ապրանքի տվյալները մնացել են նույնը՝ ինձ չընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Խորհրդում տեղի ունեցած նիստին մասնակցում էր Ա/Ձ Հայկ Գալստյանի լիազորված ներկայացուցիչ Թեմուր Գալստյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/58 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 13.10.2017թ. թիվ 03/26-3/18640-17 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 13.10.2017թ. թիվ 03/26-3/18640-17 գրությունը, Ա/Ձ Հայկ Գալստյանի Խորհրդին ուղղված 19.10.2017թ. թիվ 19.10/2017-1 և 23.10.2017թ. թիվ 23.10/2017-1 գրությունները, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/12» գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/12» գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 17.08.2017թ. ժամը 11:30-ին կայացած նիստի N 4 և 27.09.2017թ. ժամը 10:30-ին կայացած նիստի N 5 արձանագրությունները, Ա/Ձ Հայկ Գալստյանի և «ԱՐԿՈՄՊ» ՍՊԸ-ի միջև 14.09.2017թ. կնքված N 14/09/17-1 առքուվաճառքի պայմանագիրը, Ա/Ձ Հայկ Գալստյանի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար վերանորոգման ծախսային նյութերի և պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ

ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Հայկ Գալստյանը:

Ընկերությունը ընթացակարգին ներկայացված հայտի N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/12» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին:

Հանձնաժողովը 17.08.2017թ. ժամը 11:30-ին կայացած նիստի N 4 արձանագրության 3-րդ կետով Ընկերությանը 4-րդ չափաբաժնի մասով ճանաչել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 4.2 կետով Հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջարկել առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/12» գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր, ինչի մասին Հանձնաժողովը 14.09.2017թ. Ա/Ձ Հայկ Գալստյանին ուղարկել է համապատասխան ծանուցում:

Ա/Ձ Հայկ Գալստյանը 14.09.2017թ. ընթացակարգին ներկայացված հայտի N 6.1 հավելվածով՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը՝ հետևյալ բովանդակությամբ. «Կլինգրիտ տակդիրային 1,5 մմ, արտադրողի անվանումը՝ «ՎԱՏԻ» ԲԲԸ, ծագման երկիրը՝ ՌԴ, տեխնիկական բնութագիրը՝ հաստությունը՝ 1.5 մմ +/- 0.2 մմ, մեկ կտորի լիստի չափսերը ոչ պակաս 1000x1000 մմ, մակնիշը՝ ՊՄԲ կամ համարժեք»:

27.09.2017թ. ժամը 10:30-ին կայացած նիստի N 5 արձանագրության 1.1 կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Հայկ Գալստյանի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, այն է՝ 4-րդ չափաբաժնում տեխնիկական բնութագրում նշվել է «կամ համարժեք» բառերը:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է առաջարկել Ա/Ձ Հայկ Գալստյանին մեկօրյա ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ միաժամանակ էլեկտրոնային եղանակով վերջինիս ուղարկելով ծանուցում՝ նշելով հետյալը. «Ներկայացված «տեխնիկական բնութագրեր» դաշտը լրացված է թերի, քանի որ Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը համապատասխան ճանաչվելու դեպքում նույնությամբ ներառվելու են կնքվելիք պայմանագրում, անհրաժեշտ է ներկայացնել ապրանքի հստակ տեխնիկական բնութագիր, մասնավորապես, 4-րդ չաձաբաժնում տեխնիկական բնութագրում նշվել են (կամ համարժեք) բառերը»:

Նույն ծանուցմամբ Հանձնաժողովը տեղեկացրել է Ա/Ձ Հայկ Գալստյանին, որ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը՝ շտկված տարբերակն ուղարկելով a.baghramyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

02.10.2017թ. արձանագրությամբ Հանձնաժողովը արձանագրել է, որ Ա/Ձ Հայկ Գալստյանի կողմից ներկայացված շտկված տարբերակում հանվել են «կամ համարժեք» բառերը, սակայն նույն տարբերակում բացակայում է նաև ներկայացվող ապրանքի կոնկրետ տեսակը (մակնիշը)՝ «ՊՄԲ», և որոշել է մերժել Ա/Ձ Հայկ Գալստյանի հայտը 4-րդ չափաբաժնի մասով՝ տեխնիկական բնութագրի անհամապատասխանության հիմքով:

Խորհրդում 20.10.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Ա/Ձ Հայկ Գալստյանի ներկայացուցիչն ընդունեց, որ Ա/Ձ-ի կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի շտկված տարբերակում վերջինիս աշխատակցի կողմից ապրանքի տեխնիկական բնութագրից «կամ համարժեք» բառակապակցության հետ թյուրիմացաբար հեռացվել է նաև ապրանքի մակնիշը՝ «ՊՄԲ», սակայն պնդեց, որ կատարվածը չի եղել միտումնավոր՝ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, որը չի հանգեցրել ապրանքի մնացած տեխնիկական ցուցանիշների փոփոխմանը:

Բացի այդ, Ա/Ձ Հայկ Գալստյանը 23.10.2017թ. թիվ 23.10/2017-1 գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ԱՐԿՈՄՊ» ՍՊԸ-ի հետ 14.09.2017թ. կնքված N14/09/17-1 «ՊՄԲ մակնիշի տակդիրային կլինգրիտ» ապրանքատեսակի առքուվաճառքի պայմանագրի պատճենը և հայտնել, որ նշված պայմանագիրը Ա/Ձ-ի կողմից կնքվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/12» ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու վերաբերյալ տեղեկությունն ստանալուց հետո՝ որպեսզի ապահովի 2017թ. 4-րդ եռամսյակում նախատեսվող մատակարարումը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ)

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

- 46-րդ կետի համաձայն՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

- 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ»» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի

պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 8.20 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն ապրանքի ամբողջական նկարագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

Հրավերի 8.21 կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հրավերով մասնակցին տեղեկություն ներկայացնելու պայման սահմանվելու դեպքում միաժամանակ ներկայացվում են այդ տեղեկության վավերապայմանները:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի թիվ 237-Ա հրամանով հաստատված գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևի (այսուհետ՝ նաև Հրավերի օրինակելի ձև) N 6.1 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, նախատեսված են հետևյալ վավերապայմանները՝ առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայ¬մաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Խորհուրդն արձանագրում է, որ Ա/Ձ Հայկ Գալստյանի հայտով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի շտկված տարբերակում առկա են հրավերի օրինակելի ձևով նախատեսված պարտադիր վավերապայմանները՝ (ապրանքի անվանումը՝ Կլինգրիտ տակդիրային 1,5 մմ, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը՝ «ՎԱՏԻ» ԲԲԸ, ծագման երկիրը՝ ՌԴ և տեխնիկական բնութագիրը՝ հաստությունը՝ 1.5 մմ +/- 0.2 մմ, մեկ կտորի լիստի չափերը ոչ պակաս 1000x1000):

Միաժամանակ, Խորհուրդը գտնում է, որ ապրանքի մակնիշը չի հանդիսանում հրավերի օրինակելի ձևով նախատեսված պարտադիր վավերապայման, հետևաբար, Հանձնաժողովը՝ ապրանքի մակնիշի վերաբերյալ տվյալի բացակայության հիմքով Ա/Ձ Հայկ Գալստյանի հայտը մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ:

Խորհուրդը գտնում է նաև, որ Հանձնաժողովը՝ մերժելով Ա/Ձ Հայկ Գալստյանի հայտը, խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 52-րդ կետի 1-ին ենթակետով և Հրավերի 8.21 կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ տվյալ դեպքում առկա չէ Ա/Ձ Հայկ Գալստյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ հիմք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 13.10.2017թ. թիվ 03/26-3/18640-17 գրությամբ Ա/Ձ Հայկ Գալստյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ